

ԴԱՐԻԻ ԴԵՐԸ ԱՖՂԱՆՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՒՇՏՈՒ ԴԵՏ

Աֆղանստանի Իսլամական պետության ամբողջ տարածքի երեսունից ավելի լեզուների հետ ժամանակակից դարիի առնչությունների բացահայտման և երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրա դերի ու նշանակության լուսաբանման խնդիրը որպես այդպիսին իր ամբողջության մեջ ինչպես մեզանում, այնպես էլ իրանագիտության, աֆղանագիտության և դարիագիտության մեջ հատուկ քննարկման առարկա չի դարձել: Մինչդեռ այս խնդիրը բաղադրող հարցերի մշակումը խիստ կարևոր է ժամանակակից դարիագիտության համար և մեծ նշանակություն ունի Աֆղանստանի Իսլամական Պետության լեզուների ընդհանուր համակարգում ժամանակակից դարիի տեղի որոշման ու զնահատման առումով, մանավանդ, որ ցայսօր գոյություն ունեն նրա ձևավորման պատմական ուղուն վերաբերող իրարամետ լարձիքներ:

Հարյուրամյակներ շարունակ իրանական, հունական, արաբական, թուրք-մոնղոլական և Մեծ մոնղոլների տիրապետության պայմաններում գոյատևելով՝ այսօրվա Աֆղանստանի Իսլամական Պետությունը ներկայանում է որպես բազմազգ ու բազմալեզու բնակչության երկիր: Նրանում ապրող տարբեր լեզուների ու բարբառների ներկայացուցիչներ են քսանից ավելի մեծ ու փոքր ժողովուրդներ՝ տաջիկներ, փուշտուններ, ուզբեկներ, հազարիներ, թուրքմեններ, նուրիստանիներ, բելուջներ, կիրգիզներ, ղազախներ, ղզլբաշներ, արաբներ, բախտիարիներ, փաշաիներ և այլն, որոնք, կողք կողքի ապրելով միևնույն պետության պայմաններում, առնչվել են միմյանց հետ հասարակական, քաղաքական և պատմամշակութային կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ դրսևորելով միևնույն ժամանակ նշանակալի փոխադարձ ազդեցություն միմյանց վրա:

Նշենք, որ հայ իրականության, ինչպես նաև հայերեն հրատարակված մասնագիտական գրականության մեջ ու որոշ բառարաններում «փուշտուն», որից օգտվում ենք սույն հոդվածում, ներկայացվում է «փուշտու» կամ «փաշթու» ձևերով՝ ռուսերեն լեզվով իրանագիտական գրականության մեջ հանդիպող **оштан**-ի օրինակով: Ընդ որում հայերենում այս երկու ձևերը՝ որպես միևնույն տեղանի երկու տարբերակներ, հանդիպում են հետևյալ երկու նշանակություններով. «փուշտու» ժողովուրդ և այդ ժողովրդի մայրենի լեզու, որոնց իրական լեզվական արտահայտության ձևերն են՝ «փուշտուն» (ժողովուրդ) և «փուշտու»՝ այդ ժողովրդի ազգային լեզու:

XV-XVI դդ. Աֆղանստանում բնակություն հաստատած իրանական ֆիրուզբուհի, քամշիդի և թայմանի ցեղերը, իսկ հետագայում նաև միջինասիական տարբեր ժողովուրդների ներկայացուցիչները, տեղի բնիկ տաջիկների հետ միանալով, ստեղծել են երկրի ազգաբնակչության հիմնական մասը: Երկարատև կեցության պայմաններում գտնվելով բնիկ ազգաբնակչության հասարակական, լեզվամշակութային ազդեցության ոլորտներում՝ ցուցաբերել

են նշանակալի մասնակցություն երկրի հասարակական, քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքի տարբեր բնագավառներում: Նրանց, ինչպես նաև Աֆղանստանի մնացած ժողովուրդների ներկայացուցիչների նկատմամբ գիտական ու հասարակական-քաղաքական գրականության մեջ սովորաբար գործածվում է «աֆղանստանցիներ (աֆղանիներ)» ընդհանուր անվանումը²:

Աֆղանստանի իսլամական Պետության տարածքում համեմատաբար լայն տարածում ունեցող լեզուները պատկանում են թյուրքական, սեմական և հնդիրանական լեզուների խմբերին³: Թյուրքական լեզուներից ուզբեկերենը, թուրքմեներենը, դավախերենը, դրոզերենը տարածված են երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում⁴: Սեմական լեզուները ներկայացնող արաբերենը տարածված է երկրի հարավային շրջաններում⁵: Հնդիրանական լեզուներից կարելի է թվարկել փուշտու, դարի, բելուջերեն, քրդերեն, օրմուրի կամ բարաքի, ուրդու, փենջաբի, սինդի և լանդի լեզուները⁶: Բելուջերենի կրողները բնակվում են Հիլմենդ գետի հարավային հովիտներում, Պակիստանի և Բելուջիստանի սահմանամերձ շրջաններում: Քրդերենով խոսողները բնակվում են Հերաթ և աֆղանահիրանական սահմանամերձ այլ նահանգներում: Օրմուրին տարածված է Լոգարում: Ուուրդուով, փենջաբիով, սինդիիով և լանդիով խոսում են երկրի հարավային և արևելյան շրջաններում:

Գարիի կրողները (աֆղանական տաջիկները), որոնք իրենց ազգային ինքնատիպ դրսևորումներով ու մշակույթով ուրույն տեղ են գրավում աֆղան հասարակության կազմում, բնակվում են Քաբուլ, Զարիքար, Էստալիֆ, Փանջշիր, Ղուրբանդ շրջաններում, ինչպես նաև Բալխում, Ջուզջանում, Սալանգում, Սամանգանում, Ֆարյաբում, Բադղիսում, Բադլանում, Թախարում, Ղահրուզում, Բադախշանում և Հինդուկուշի հյուսիսային ու հարավային հարթավայրերում: Որոշ տեղեկությունների համաձայն դեմոս միջին դարերի սկզբներին նրանք բնակվել են Սուլեյմանյան լեռների հարավային և այդ լեռների ու Հինդուկուշի միջև ընկած հարթավայրերում: Իսկ ավելի վաղ շրջաններում նրանք բնակվել են այսօր արդեն փուշտունաբնակ Ջոնար, Խոստ, Ջորմաթ և Գարդեզ շրջաններում⁷: Հազարիները, որոնք իրենց փարսիականներ են անվանում և ունեն իրենց մայրենի լեզուն (հազարի), նույնպես խոսում են դարիով և ըստ 1990 թ. ՄԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, կազմում են երկրի բնակչության 51%-ը⁸: Նրանք մոնղոլական ծագում ունեցող ժողովուրդներից են, շուրջ 700 տարի է, ինչ դարպել են խոսել մոնղոլերեն: Ժամանակի ընթացքում կողք կողքի ապրելով Աֆղանստանի տաջիկների հետ երկրի կենտրոնական և հյուսիսարևմտյան լեռնային⁹ Հազարեջաթ կոչվող տարածքում¹⁰: ընդունել են տեղաբնակ տաջիկների լեզուն ու սովորույթները: Հազարին համարվում է դարի-ի խոշոր բարբառներից մեկը:

Սոտավորապես չորս հազար տարի առաջ Աֆղանստանում, որը մինչև XIII դ. կոչվել է Սուլեյմանյան լեռների երկիր¹¹ (իրանական բարձրավանդակի արևելյան ծայրամաս կամ ժամանակակից Աֆղանստանի հարավարևելյան մաս), բնակվում էին հին իրանական քոչվոր անասնապահ ցեղեր: «Այդ ցեղերը խոսում էին արևելահրանական, հնդկական և դարդիական լեզուներով, որոնք էլ կազմել են փուշտուի հիմքը»¹²: Առաջին գրավոր աշխատությունը փուշտուով պատմական մի փաստաթուղթ է սվաթների դեմ յուսեֆզայ ցեղերի կրած հաղ-

թանակի մասին, որը պատկանում է XV դ. ապրած Շեյխ Սալլիի գրչին¹¹։ Փուշտուի գործառության զգալի ընդլայնումը Աֆղանստանում սկսվում է XVIII դ. կեսերից։ Լինելով գրավոր ու բանավոր-խոսակցական լեզու՝ այն հետզհետե ձեռք է բերում երկրի վարչակառավարման և ռազմական գործի լեզվի կարգավիճակ¹²։ Այնուհետև Աֆղանստանում հաստատված Ղուրանիների թագավորության ժամանակ, որի իշխանությունը ներառում էր Յերաթից մինչև Ղելի ընկած տարածությունը, մայրաքաղաք Ղանդիարում գործածվող փուշտուի արդալի կոչվող բարբառը աստիճանաբար տարածվում է երկրի պետական, տնտեսական և ռազմական ոլորտներում։

Փուշտուները, որոնց լեզվի և դարիի փոխհարաբերությունների ուսումնասիրության վիճակին և այդ վիճակից բխող խնդիրներին հատուկ անդրադառնում ենք ստորև, տարածված են երկրի արևելյան սահմաններից մինչև Ջաբուլ և նրանից դեպի արևմուտք՝ Ղազնիից մինչև Ղանդիար, ինչպես նաև հյուսիսարևմտյան և հարավարևմտյան շրջաններում։ Կազմում են ժամանակակից Աֆղանստանի ազգաբնակչության շուրջ 8 միլիոնը։ Նրանց լեզվի և դարիի կապերի մասին խոսելիս աֆղանստանցի հետազոտող Սաիդ Ղասեմ Ռեշտիան նշում է. «Պատմալեզվաբանական ուսումնասիրությունները ապացուցում են, որ դարին և փուշտուն, որոնք ունեն մեկ ընդհանուր լեզվահիմք, պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի արիական լեզուների ճյուղին, երկուսն էլ առաջացել և զարգացել են միևնույն երկրում՝ Գին Արիանայում կամ մերօրյա Աֆղանստանում, որտեղից էլ նրանցից առաջինը տարածվել է դեպի արևմուտք, իսկ մյուսը՝ դեպի արևելք, Մուլեյմանյան լեռներից մինչև Սինդ հովիտը»¹³։ Փուշտուն տարածված է նաև Պակիստանում, Աֆղանստանի հետ սահմանամերձ Վեզիրեստան, Թիլդախ, Ղիր, Զիտրալ, Սվաթ և Բաջաուր կոչվող շրջաններում։ Ունի արևմտյան և արևելյան բարբառներ, որոնցից առաջինը կոչվում է «փուխթո», իսկ երկրորդը՝ «փաշթո»։ Այդ բարբառներն էլ իրենց հերթին ունեն տարածքային շուրջ 50 ենթաբարբառներ, որոնք իրենց բառային, հնչյունական և բերականական հատկանիշներով բաժանվում են Ղանդիարի, Նանգարիարի և Պակտիայի խմբերի։ Արևելյան բարբառով խոսողների կենտրոնը Փեշավարն է, իսկ արևմտյան բարբառով խոսողներինը՝ Ղանդիարը¹⁴։ Այս լեզուն կրողները հաճախ իրենց անվանում են նաև փաթաններ։ Լ Կիսեյլովայի դիտարկմամբ այս լեզվով այսօր աշխարհում խոսում է շուրջ 15 միլիոն մարդ՝ 8 միլիոն Աֆղանստանում, 6 միլիոն Պակիստանում ու Բելուջիստանում, 50000 Իրանում։ Այդ լեզուն որպես երկրորդ լեզու է գործածում Աֆղանստանի ոչ փուշտուալեզու բնակչության մոտավորապես 10%-ը¹⁵։

Մինչև աֆղանական առաջին միասնական պետության կազմավորումը (1747 թ.) և նրանից հետո (շուրջ 260 տարի) փուշտուները մշտապես կազմել են բնակչության մեծամասնությունը և ունեցել են գերիշխող դեր, իսկ պետականության հաստատումից հետո նրանց շրջանում տիրել է երկլեզվությունը։ Ընդ որում երկրի գրական լեզվի, պետական-պաշտոնական, գիտական, միջազգային կապերի ոճերը, ինչպես նաև ազգամիջյան հաղորդակցման գլխավոր լեզուն հանդիսացել է դարին։ Փուշտուն ծառայել է հաղորդակցման միջոց լույս աֆղանական ցեղերի միջև։ Այս անհավասարությունը երկու հիմնական լեզուների միջև շարունակվում է մինչև XX դ. 20-ական թթ. վերջը, երբ Աֆղանս-

տանում հաստատվում է անկախությունը: 20–30–ական թթ. փուլշտուն երկրի պետական լեզու ճանաչելու հետ կապված ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ 1931 թ. Սահմանադրության տեքստի հրատարակումը դարիից բացի նաև փուլշտու լեզվով: Աստիճանաբար սկսում են ընդլայնվել փուլշտուի գործառության շրջանակները: 1933 թ. առանձին հրամանագրով դարիալեզու դպրոցներում փուլշտու լեզվի դասավանդումը դառնում է պարտադիր, որը նպատակ էր հետապնդում այն հետազայում ընդունելու որպես պետական լեզու¹⁶: 1937 թ. Զարուլում հիմնադրվել է «Փաշթու թոլենա» (փուլշտու լեզվի ակադեմիա) գիտական կենտրոնը, որն ակտիվորեն զբաղվել է այդ լեզվի ուսումնասիրությամբ ու տարածմամբ¹⁷:

Մինչև 1936 թ. դարին ժամանակակից Աֆղանստանի ամբողջ տարածքի միակ պետական լեզուն էր, որը մեծ ազդեցություն է թողել փուլշտուի վրա: Փուլշտուի և դարիի պետական լեզուներ ընդունելու փաստը արտացոլվում է նաև 1964 և 1977 թվականներին ընդունված Սահմանադրություններում: Դետգիետե փուլշտուն դառնում է նաև Աֆղանստանում անցկացվող միջազգային նստաշրջանների ու հավաքների աշխատանքային լեզու: 40–50–ական թթ. երկրի ղեկավարությունը և ազգային հայրենասիրական ուժերը առավել զգալի կարևորություն են տալիս փուլշտուի դերի բարձրացմանը ու նրա նշանակությամբ հասարակական–քաղաքական կյանքում: Ուսումնասիրության առարկա են ծառայում փուլշտուն, նրա քերականական կառուցվածքը, հրատարակվում են ձեռնարկներ, բառարաններ և այլն: Այդ լեզվով սկսում են տպագրվել թերթեր, ամսագրեր, գեղարվեստական գրականություն և այլն, որոնք այսօրվա դրությամբ զգալի ընդլայնել են նրա գործառության ոլորտները:

Աֆղանստանում տարածված լեզուների ընդհանուր շարքում դարին և փուլշտուն, որոնք սովորաբար հանդիսանում են համատարած կիրառությամբ ազգային լեզուներ, ունեն ուրույն պետական կարգավիճակ: Նրանց հստակ հակադրմանը առավել կամ պակաս չափով չի նպաստում միգրացե այն հանգամանքը, որ իրանագիտության մեջ ֆարսի կոչվող լեզվի նկատմամբ «դարի» անվանման կիրառության ճշգրիտ ժամանակաշրջանի վերաբերյալ միասնական կարծիք բացակայում է: Մինչդեռ դարին որպես դասական գրական պարսկերենի առանձին զարգացում, ճիշտ է, որոշ դեպքերում հիշատակվում է XVIII դ. կեսերից, սակայն ստույգ աղբյուրներում դիտարկվում է որպես գրական պարսկերեն լեզվի անվանում, որը հայտնի է իրանի, Միջին Ասիայի, Դյուսիսային Դնդկաստանի և Ադրբեջանի գրության մեջ սկսած IX դ. վերջերից մինչև XVI դ. սկիզբը¹⁸:

1978 թ. Սպրիլյան հեղաշրջումից հետո երկրի բոլոր լեզուները հայտարարվել են հավասար լեզուներ: Նույն հրամանագրով պաշտոնական լեզվի կարգավիճակ է տրվել փուլշտու, դարի, ուզբեկերեն, թուրքմեներեն և բելուջերեն լեզուն: Երկրում վերացվել են փուլշտուն տիրապետող քաղաքացիներին տրվող բոլոր տեսակի արտոնությունները: Այսօր դարին շարունակում է մնալ որպես գրական, խոսակցական և ազգամիջյան հաղորդակցման, պաշտոնական գործառության, կրթության, գիտության լեզու: Աֆղանստանի բնակչության 80%-ի անգրագիտության պայմաններում օրեցօր ընդլայնվում են նրա

գործառության շրջանակները: Այստեղ բնակվող գրեթե բոլոր փուշտուհները, ուզբեկները, թուրքմենները, կիրգիզները, բելուջները, հնդիկները և այլ ազգերի ու ազգությունների ներկայացուցիչները, բացառությամբ խուլ ծայրամասներում բնակվող մեծահասակների, կանանց ու երեխաների, ազատ տիրապետում են այս լեզվին¹⁹: Նույնը չի կարելի ասել փուշտուհի մասին: Այն հանգամանքը, որ երկրի ազգաբնակչության կազմում մեծամասնություն ներկայացնող փուշտուհները գրեթե ազատ իրենց մայրենի լեզվից բացի տիրապետում են նաև ռարիին, որն ինքնին խթան է այդ երկու լեզուների փոխադարձ հարստացման ու մերձեցման համար:

Ղարին, հանդիսանալով շուրջ 5 միլիոն տաջիկների, մոտավորապես 3 միլիոն հազարիների, 500000 ղզլբաշների ու չարայմադների մայրենի լեզուն, ինչպես նաև լինելով երկրի համարյա բոլոր քաղաքներում և նահանգների կենտրոններում փուշտու լեզվից ավելի շատ տարածված²⁰ հիմնական լեզու, կիրառվում է որպես հասկանալի լեզու երկրի բնակչության ոչ ղարիալեզու զանգվածի 80%-ի համար, դրսևորում է համընդհանուր լեզվի կիրառության գործընթացների զգալի աճ ու զարգացման միտումներ, որոնք նշանակալիորեն խթանում են նրա մեծ դերը Աֆղանստանի ժամանակակից հասարակական-քաղաքական կյանքում:

ՕԱՆՈՒՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(իղումներում պարսկերեն և ղարի լեզուներով
գրականությունը տրվում է անգլերեն գրությամբ)

1. Демократическая Республика Афганистан, Издательство "Наука", Главная редакция восточной литературы, Москва, 1981, с. 25.
2. Ахрамович Р.Т., Афганистан в 1961—1966 гг., Издательство "Наука", Главная редакция восточной литературы, Москва, 1967, с. 145—146, Мухаммед Али, Афганистан, Государственное издательство географической литературы, Москва, 1957, с. 74.
3. Афганистан, Издательство "Наука", Главная редакция восточной литературы, Москва, 1964, с. 20—23.
4. Հայկական սովետական հանրագիտարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1980, հ. 6, էջ 474:
5. Հայկական սովետական հանրագիտարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1978, հ. 4, էջ 194:
6. Սդայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987, 673 էջ:
7. Jahanyar Fayz Ahmad, Az Aryana ta Afghanistan, Faslnameye Markaze motaleate Asyaye markazi va Ghafghaz, №9, Tehran, 1372, s. 65—66.
8. Jahanyar Fayz Ahmad, Az Aryana ta Afghanistan, s. 67.
9. Рейснер И. М., Развитие феодализма и образование государства у афганцев, Издательство Академии наук СССР, Москва, 1954, с. 31—33.
10. Давыдов А. Д., Черняховская Н. И., Афганистан, Издательство "Мысль", Москва, 1973, с. 10.

11. Heravi Najib Mayel, Tarikh va zaban dar Afghaneestan, Bonyade Moghufate doktor Mahmude Afshar, Tehran, 1371, s. 90.
12. Кушев В.В., Пути становления и развития литературного афганского языка(16–19 веков), Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук, Санкт–Петербургский университет, 1992, с. 4.
13. Reshtiya Seyyed Ghasem, Kalamate dakhile pashtu dar zabane dari, Pashtu asar chapi, Entesharate Pashtu tolena, Kabul, 1345, s. 171–172.
14. Киселева Л.Н., Афганистан, в кн. Зарубежный восток, Языковая ситуация и языковая политика, Издательство “Наука”, Главная редакция восточной литературы, Москва, 1986, с. 30.
15. Afghanistan (Majmueye maghalat), Negareshe goruhi az pajuheshgaran, Entesharate Dayeratolmarefe eslami, Tehran, 1376, s. 117–118.
16. Современный Афганистан, Издательство восточной литературы, Москва, 1960, с. 70.
17. Оранский И. М., Введение в иранскую филологию, Издательство восточной литературы, Москва, 1960, с. 308.
18. Ахмед Хани, Мам и Зин, Издательство восточной литературы, Москва, 1962, с. 234, Лазар Ж., Общий язык иранских земель и его диалекты по текстам X–IX вв. н.э.” Народы Азии и Африки”, Издательство АН СССР, Москва, 1961, #4, с. 176–177, Пейсинов Л.С., Проблема языка дари в трудах современных иранских ученых, “Вопросы языкознания”, Издательство Академии наук СССР, Москва, 1960, #2, с. 120–125, Большая Советская Энциклопедия, третье издание, т. 7, с. 554.
19. Киселева Л. Н., Афганистан, Языковая ситуация и языковая политика, с. 33–34.
20. Додыхудоев Р., Назаров Х., Афганистан сегодня, Главная научная редакция Таджикской Советской Энциклопедии, Душанбе, 1988, с. 35.

В. Парсаданян

РОЛЬ ЯЗЫКА ДАРИ В ОБЩЕСТВЕННО–ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ АФГАНИСТАНА И ЕГО СВЯЗИ С ПУШТУ

Статья посвящена роли и значению современного языка дари в общественно–политической жизни Исламского Государства Афганистан. В ней рассматриваются результаты изучения связей и отношений языка дари с родственными и неродственными языками, бытующими в Афганистане. Освещаются этноязыковая ситуация современного Афганистана и место обитания многонационального населения страны. На фоне широко распространенных индоиранских, тюркских и семитских языков, представляется значение языка дари и его носителей в афганском обществе. Выделяется возрастающая роль и значение этого языка как средства межнационального общения в условиях двуязычия в стране. Рассматриваются исторически установленные связи и отношения двух государственных языков – пушту и дари, зафиксированные в Конституциях Афганистана 1964 и 1977 гг. Отмечается неравно использование этих языков до 20-х годов XX века.

В статье отмечается, что в 1978г. было провозглашено равенство всех языков страны, а пушту, дари, узбекский, туркменский и белуджский получили статус официаль-

ных языков. Одновременно отмечается, что в настоящее время в Афганистане большинство населения говорит на языке дари, что свидетельствует о растущей роли и значении этого языка в общественно-политической жизни страны.

V. Parsadanyan

THE ROLE OF DARI IN THE SOCIAL AND POLITICAL LIFE OF AFGHANISTAN AND ITS CONNECTION WITH PASHTO

The article deals with the role and importance of modern Dari in the social and political life of the Islamic State of Afghanistan where more than 30 languages are spoken.

The ethnolinguistic problems existing in Afghanistan as well as practical interrelations between Dari and Pashto (the main two languages of the widespread families of Indo-Iranian, Turkic and Semitic languages in the country), are presented here. The habits of people who speak these languages are described in the article.

The article also speaks about the parent languages of Pashto, the first document written in Pashto, the development of the language, its western and eastern dialects. Dari and Pashto are noted to have been unequal in use until the 20s of the XX century.

It is mentioned that according to the Constitutions of the country the Dari and Pashto languages are considered as state languages, yet until 1936 Dari was the only state language of Afghanistan. The article includes the fact that all the languages of the country have been proclaimed equal since 1978 and the Dari, Pashto, Uzbek, Turkmen and Baluchi languages have been declared as the official languages of Afghanistan. The article mentions that almost all Pushtus (Afghans), Uzbeks, Indians, Baluchi and the representatives of other nations who live on the territory of Afghanistan speak Dari fluently, except for the old people, women and children who live in the remote places of the country. This fact proves that Dari tends to become a universal language for the Islamic State of Afghanistan.